ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ALMA MATER

Դժուար թէ որեւէ պատմաբանի կամ հայ մշակոյթի պատմութեան ուսումնասիրողի յաջողուի հստակութեամբ տարորոշել 140 երկար տարիների շղթայի վրայ տարածուող Գէորգեան հոգեւոր ճեմարանի նշանակութիւնը հայ ժողովրդի կեանքում: Դժուար՝ ոչ թէ իր անցեալի մութ ու խրթին ծալքերի, այլ ազգային-կրօնական եւ մշակութային անդաստանում նրա տուած ատոք ու բազմաբեղուն հասկերի պատճառաւ:

Այո՛, անցնող մօտաւորապէս մեկուկէս դարի ընթացքին նա հարազատ մօր պէս տարածել է իր գգուող ձեռքերը, մայրական գրկի մէջ նետուած ամէն մի հատիկ գուրգուրել, ջրդեղել իր վշտի եւ ուրախութեան արցունքներով, ջերմացրել Սուրբ Էջմիածնից առած հոգեւոր ջերմութեան տաք արեւի ճառագայթներով:

Այո՛, այն հիրաւի մի Alma Mater է բոլոր անցած, անցնող ու գալիք սերունդների համար: Կրթութեան եւ գիտութեան մի անձնուէր Կոյս, որի բեղուն արգանդը, սակայն, չի դադարել եւ չի դադարում ծնել հայրենի գիտութեան ու Մայր Եկեղեցու նուիրեալ սպասաւորներ:

2014 թուականը Հայոց Եկեղեցու եւ հայ ժողովրդի կեանքում նշանաւորում է Գէորգեան հոգեւոր ճեմարանի հիմնադրման 140-ամեայ յոբելեանով: Որքա՜ն ներշնչող, նոյնքան էլ պարտաւորեցնող՝ իր փառաւոր անցեալը հիմնախնդիրներով ու մարտահրաւէրներով լի ներկայի մէջ վերարժեւորելու, նոր մարմին ու աւիւն հաղորդելու տեսանկիւնից: Այսօր այն դարձել է Հայ Եկեղեցու գիտակից ու պատրաստակամ սպասաւորներ պատրաստող օջախ՝ չկորցնելով, սակայն, համահայկական մշակութային կենտրոնի իր դերն ու նշանակութիւնը:

Կարելի է առանց վարանելու փաստել, որ այսօր եւս Alma Mater-ի հնացած, բայց աւիւնով լցուած երկու ձեռքերը՝ աստուածաբանութիւնն ու հայագիտութիւնը, նոր, աւելի վճռական թափով ու պատրաստակամութեամբ են սպասում՝ գրկելու լուսաւոր ճակատները բոլոր այն նուիրեալների, ովքեր անձանձիր կերպով ուխտելու են իրենց միտքն ու խօսքը զոհաբերելու հայ քրիստոնէական պատմութեան խորանին:

Ճեմարանի փառապանծ սերունդներից ու սաներից ստացած Աւանդութիւնն սպասում է նոր իրագործումների, մանաւանդ հայ աստուածաբանական մտքի անդաստանում: Այն բացառիկ է իր ազգային խառնուածքով, բայց մեկուսացած չէ համաքրիստոնէական արժէքներին նոր որակներ պարգեւելու առումով: Հայոց պատմութեան եւ եկեղեցական մատենագրութեան էջերը լիքն են հոգեւոր ու ազգային իրագործումների օրինակներով: Եւ դրանց բոլորի մէջ գրեթէ միշտ կենտրոնական է դպրոցի, դպրեվանքի նուիրական գաղափարն իբրեւ Մայր հաստատութիւն:

Այս իմաստով հայ կրօնական-աստուածաբանական մտքի մէջ Alma Mater-ի կերպարը միշտ էլ տիրապետող է: Եթէ եւրոպական առաջին Alma Mater-ը՝ Բոլոնիայի համալսարանը, հիմնադրուել է 1088 թ.՝ իբրեւ Արեւմտեան աշխարհի ամենահին ու տեւական համալսարանական կենտրոն, ապա այդ նոյն ժամանակ միջնադարեան Հայաստանում ստեղծուած բազմաթիւ դպրոցների սաներ գուրգուրանքով եւ հպարտութեամբ էին իրենց Մայր դպրոցները կոչում «Նոր իմն Աթէնք» եւ «ճեմարան իմաստից»:

Բնաւ էլ հարկադրուած համեմատութեան չենք կամենում ձգտել. այդ ժամանակաշրջանում էապես տարբեր էին Արեւմտեան եւ Արեւելեան գիտական, փիլիսոփայական եւ աստուածաբանական համալսարան-դպրոցների մօտեցումները: Բայց եւ փաստ է, որ հայ միջնադարեան գիտական-աստուածաբանական մտասեւեռման մէջ Մայր դպրոցը կամ Մայր դպրեվանքն էր իր սաներով շէնացնում գիտափիլիսոփայական ու կրթական միտքը: Հայոց Alma Mater-ները միշտ դէմքով ուղղուած էին դէպի ներկայի ու ապագայի իրագործումներ՝ իրենց իմաստասիրական-աստուածաբանական փնտրտուքի ճանապարհը հարթելով աւանդութեան ու փորձի ապահով եզրագծերով:

Այսօր, ահա, այդ Աւանդութեան ջահը կրկին Գէորգեան հոգեւոր ճեմարանի ձեռքին է՝ իբրեւ Հայոց հողի վրայ նոր ժամանակներում հաստատուած ամենահին ու ամենատեւական բարձրագոյն ուսումնական հաստատութիւն: Մեր Alma Mater-ն արդէն 140 տարի իր աչալուրջ հայեացքի ներքոյ, ասես մի անդրի, հսկում է աստուածաբանական-հայագիտական երթի ելած իր սաներին: Մենք ամէնքս նոր լոյս ու ջերմութիւն ենք մաղթում Նրա ձեռքին հուրհրատող գիտութեան ջահին:

«Էջմիածին» ամսագրի խմբագրակազմը, յանուն Գէորգեան ճեմարանի բոլոր շրջանաւարտների, գլուխ է խոնարհում Alma Mater-ի հանդիսաւոր անդրիի առաջ:

Շ. Վ.